600.0049.23.07.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2002 թվականի № 49 Ա
ք.Երևան

ՋՐԱՅԻՆ ԵՎ ՇՈԳԵՏԱՐ ՋԵՐՄԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի թ) ենթակետը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «Երևանի ջերմային էլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված «Ջրային և շոգետար ջերմային ցանցերում ջերմության տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդիկան» (հավելված):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Մովսեսյան**

23 հուլիսի 2002թ.
ժամը 15 ^{00}
ք.Երևան